

**Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ
պրն. Ա. Ջավադյանին**

Հարգելի պարոն Ջավադյան

Համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2008թ-ի դեկտեմբերի 30-ի թիվ 373-Ն որոշման 50-րդ մասի 10-րդ կետի Չեզ եմ ներկայացնում «Շեն-Կոնցեռն» ՓԲԸ-ին վերաբերող 02.06.11թ-ի էական տեղեկությունը, որը նաև տեղադրված է նաև մեր պաշտոնական կայքում (կցվում է աղյիւր 1 թերթ):

Գործադիր տնօրեն

Պասյ Բադալյան

02.06.11թ.

Համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2008թ-ի մարտի 11-ի թիվ 68-Ն որոշման 50-րդ մասի, բացահայտում են «Շեն-Կոնցեռն» ՓԲԸ-ին վերաբերող հետևյալ էական տեղեկությունը՝

1. 2011թ-ի հունիսի 1-ին «Շեն-Կոնցեռն» ՓԲԸ-ի վարչական շենքում կայացավ Ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը, որի մի շարք հարցերից բացի քննարկվեց նաև 2010թ-ի ֆինանսական արդյունքների հիման վրա շահաբաժինների վճարման հարցը և որոշվեց վճարել 345.0 մլն դրամ շահաբաժին (մեկ բաժնետոմսին 2300 դրամ):

2. 31.05.2011թ-ին «Շեն-Կոնցեռն» ՓԲԸ-ի դուստր «Շեն Գրուպ» ՓԲԸ-ն 2010թ-ի հոկտեմբերի 11-ին ԷյՋ Էս Բի Սի Բանկ Հայաստան ՓԲԸ-ի հետ կնքած վարկի պայմանագրի 1660.0 հազ. Եվրոյից ստացել է 400.0 հազ. Եվրոն, որով ամբողջությամբ մարել է «Շեն-Կոնցեռն» ՓԲԸ-ի պարտքը, իսկ վերջինս էլ վճարել է իր մատակարարներին՝ մասնավորապես կավիճի սեպարատոր սարքի, վրացական Շեն Ջորջիային նպատակային փոխառություն տրամադրելու (Վրաստանում ավազի հանք, դրա շահագործող ու սպասարկող տեխնիկա ձեռք բերելու) համար, ինչպես նաև պատրաստի արտադրանքի հումքերի համար: Հավելեմ նաև, որ Շեն Ջորջիան արդեն արտադրանք է թողարկում և այժմ իրականացնում է մարկետինգ Վրաստանի ողջ տարածքում: